1893 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1 (13) ՇՈՐԵՔՇԱԲԹԻ

№ 140 — ՏԱՍՆԵՐԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — № 140

1893 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1 (13) ՇՈՐԵՔՇԱԲԹԻ

ԱՐՁԱԳԱՆՔ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

Խմբագրութիւնը բաց է ամեայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն ցեղով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

„ԱՐՁԱԳԱՆՔ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ
1894 ԹՈՒԻՆ
(ՏԱՍՆԵՐԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

կը հրատարակուի այժմեան զիրքով և նոյն ծրագրով։ Թերթը ստանում է «Հիւսիսային գործակալութեան» հեռագիրներ։

«Արձագանքը» լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ—չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարուանը—6 ռ., երեք ամսուանը—3 ռ. և մի ամսուանը—1 ռուբլի։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Զելիմխանովկի փողոց, № 22, տուն Խանդալամանի) և ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ։

«ԱՐՁԱԳԱՆՔԻՆ» օտար քաղաքներից գրուել ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція газеты «Ардзагангъ». իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang».

Մեր այն հին բաժանորդներին, որոնք կրցանկան 1894 թուին ևս «Արձագանք» ստանալ, խնդրում ենք մինչև դեկտեմբերի 20-ը նորոգել իրանց բաժանորդագրութիւնը, որպէս զի միջոց ունենանք կարգադրելու, որ սկզբից իսկ համարները ցանկալի ճշտութեամբ ուղարկուին։

Յայտարարութիւններ ընդունում են թէ հայերէն և թէ օտար լեզուներով։

Լոկող 1894 տարուան այժմէն իսկ ստորագրուող բաժանորդները տասը ռուբլի հատուցանելով «Արձագանքի» համարները կըստանան գրուելու օրից սկսած։

Խմբագիր-հրատարակիչ ԱՐԳՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ԴՈՒՐՍ

ԹԻՖԼԻԶԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, Դեկտեմբերի 2-ին, Հայ դերասանական մշտական խումբը մասնակցութեամբ տիկ. ՀՐԱՉԵԱՅԻ կը ներկայացնէ

ԿԱՄԵԼԻԱՋԱՐԴ ՏԻԿԻՆ

Դրամա 5 գործ., հեղ. Դիւմա-որդու։

Մարգարիտ-Գոտիէի դերը կը կատարէ *ՏԻԿ. ՀՐԱՉԵԱՅԻՆ*

Սկիզբն է ճիշդ 7½ ժամին երեկոյեան։

Վերջը գիշերուայ 11 ժամին։

ԱԶԳ՝ Զուտով լինելու է պ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ բենեֆիսը։

Պատրաստվում են մի շարք նոր ինքնուրոյն պիեսներ՝ «Զօրահանդէս», «ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ», «Թատրոն» հեղ. Թուրգենևի, «Էլի մէկ զոհ», հեղ. Սունդուկեանցի և այլն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տաճկահայոց նոր գաղթը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Վեհափառ Հայրապետի Բագու գնալու մտադրութիւնը։ Երկրիս պ. կառավարչապետը Պետերբուրգում։ Բուխարայի Էմիրի Պետերբուրգ գնալու մտադրութիւնը։ Թիֆլ. քաղ. խորհրդի որոշումը։ Հայուհեաց Բարեգ. Ընկ. խոհարարական դասընթացներ։ «Խաթաբալան» վրաց բեմի վրայ։ Ժանտախտի տուած վնասը հիւսիսային Կոկկասում. Բագուայ գործակատարների խնդիրը կիրակնօրեայ հանգստեան մասին։ Թիֆլ. այլազգի բժիշկների գիտական դեկուցումները։ Պրոֆ. Զօլոտարեւովը նորակոչ զինուորների մասին։ Բուխարայի վաճառականների դիմումը ելևմտից նախարարութեան։ Օր. Պապայեանի պայմանի վերանորոգութիւնը։ Պարսից Շահի ճանապարհորդութիւնը։ Պարսից հիւպատոս Բիկա-խանի պարգևատրուիլը։ Զուլավերից։ «Մ'շակի» երախտագիտական զգացմունքը դէպի իւր alma mater-ը։ Պ. պ. Մ. Նիկոլսկու և Ա. Իվանովսկու հնագիտական ճանապարհորդութիւնը Երևանի նահանգում։

ՖԵԼԻԵՏՕՆ.—«Արձագանքի» թղթակիցը Ղալագէում։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԵՌԱԳՐԵՐ

ԶԱՆԱԶԱՆ.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՑԱՆՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ՆՈՐ ԳԱՂԹԸ *)

Թուերն աշխարհ չեն կառավարում, բայց ցոյց են տալիս թէ աշխարհն ինչպէս է կառավարում։

Գ. Ե. Ե.

III

Մեր ձեռքն է հասել զանազան զանազան անձինքների ուղղուած անթիւ խնդիրներից միայն երկուսի պատճէնը, որ առանց փղձուքի չէ կարելի կարդալ։

Ահա նոցանից առաջինը։

«Մեք կամք ի մէջ մեծ տառապանաց, որպէս զգերի, որքան վաստակս ունիմք վասն տառապեալ ընտանեաց մերոց, զայն յափշտակում են ծամանցիք և քրդերը... Համիդիէ (նոր կազմած քուրդ հեծելազօրքը) անտանելի վշտեր է տալիս մեզ, զորն անվայել է ասել լիշել, ուժով խլում են ուտեստս եւ զդստերս մեր, տանում են գերի, վասն այս անտանելի դժուարութեանց՝ բազումք գաղթեցան. . . և մեք ցանկալով առ ի ազատելոյ զհոգիս և զանձինս մեր՝ ի ձեռաց Համիդի բազում տանջանաց, ոչ կարեմք. . . ուստի կամք ի մէջ դառն տրտմութեան և արտասուաց մեծաւ տանջանօք, ոչ կարեմք գտանել հնար թէ ինչ զերծանելոյ ի տառապանաց, վասն որոյ. . . երես անկեալ աղաչեմք, զի որպիսի և իցէ մէկ հնարք գործ դնէք՝ առ ի զերծուցանելոյ մեզ անտի. . . ազատել զմեզ ի տառապանաց և ի գերութենէ՝ աւաղելով հոգւոյ և մարմնոյ ևս և լոյս հաւատոյ մերոյ, մնամք»...

Աւելի աղէխարշ է և սարսափահար երկրորդը.

«Բագրեւանդայ վիճակին պատկանող Զիրոյ, Մանկասար, Խրդըր և Գուբզրան հայաբնակ ժողովուրդն՝ մի տարի է, ի վեր խումբ խումբ սկսած են գաղթել։ Այս գաղթականները մեր դրացիներն լինելով, քրդական խիստ ճնշման ներքև իրենց գոյքն կորուսանելէ յետոյ, շալակելով միայն իրենց պտիւը ռուս հողին մէջ ապաստան գտած են։

... Մենք չհետևեցանք մեր դրացեաց, այն պատճառաւ՝ որ մեր ծանրութիւնը փոխադրել դժուարին էր, երկրորդ դեռ կը խորհէինք մեր հարստահարիչներուն սիրտը մեր վրայ քաղցրացնել, մեր գոյքն վատնելով, միջոց մի ևս սպասել ցբարութիւն մեր պատուոյ և կենաց։

Սակայն... մեր ողջ յոյսերն ի դերև ելան, մեր վիճակն ևս օր աւուր մերձեցաւ մեր գաղթական եղբարց վիճակին, առանց խնայելու տուինք մեր ունեցածը, ի նպատի ունենալով մեր միակ պտիւը, որ այսօր անուղղակի կերպով մատնուած է Համիդիէ զինուորաց, որք արձակ համարձակ մեր տները կը մտնեն, անտանելի պահանջներ կ'անեն և անասելի սպառնալիք, երբ մերժողական պատասխան ստանան։

Արդէն մեր գիւղօրէից մէջ հաստատուած են Համիդիէյի զապտիներ (զապտիաներ), որոնց շրջապատած են Համիդէի զինուորք, որոնց դիմադրել իրանց պահանջը չկատարել սրբապղծութիւն է...

Այսպէս անտանելի է... մեր հարստութիւնը գնաց, գոնէ կը խորհինք մեր պտիւը պահել, քանի որ մեր շեջը, գիւղից հեռու գտնուած մեր պատուական արտօրայք մերը չեն, մեր խոտը և յարդը մերը չէ, քրդի ցանկութիւնը լրացնելու պիտի գործածենք, ինչպէս կարելի է տանել...

Մեր ժամարներն զարարած են ժամ կոչելէ սպառնալիքներու մատնուած լինելով, մեք ևս դադարած եմք եկեղեցի գնալու՝ քրդաց մոլեռանդութիւնը մեր վերայ չգրգռելու համար. համբերելով տոկացինք, ապարդիւն դուրս ելանք, այլ ևս տոկալ տանելու ուժերնիս սպառած լինելով կը դիմեմք... կը խնդրեմք թոյլտուութիւն լինի մեզ դիմել ռուսական սահմանը, մեր գաղթական եղբարց հասնել։ Արդէն դանակը ոսկորին է հասած . . . մեր վերջնական յոյսը Ձերդ . . . է. մեք թողած եմք մեր ընտանիք, դիմած եմք այստեղ մի ճար անելու, որպէս զի մեր ընտանիք փոխադրուելու մի արգելք չլինի. եթէ արգելք լինի, Աստուած մի արասցէ, մեզ կրմնայ մահմեդական կրօնն ընդունել, զի ուրիշ մի ելք, ճանապարհ չմնար մեր առջև»։

Ի լրումն այս բոլորի մենք այստեղ յառաջ ենք բերում Բագրեւանդ (Ալաշկերտ) գաւառից Կովկաս գաղթողների ճշգրիտ, մեր հաւաքած, թուահամարը։

Ինչպէս վերոյիշեալ խնդիրների պատճէնները, այնպէս և Կովկաս գաղթողների վիճակագրութիւնը մենք ձեռք ենք բերել երկար հետախուզութիւնից, քննութիւնից յետոյ. տեղեկութիւններ ենք ստացել Ղարսից, Կաղզուանից, Կողբից և մեր Հայրենիքից Իգդիրից, ուր երկար մնացել ենք. այլ և Վեհափառ Հայրապետի ս. Օծման Հանդիսին հինգ օր շարունակ նոյնպէս հետամուտ ենք սոյն խնդրին և ուրիշների հաւաքած տեղեկութիւնների հետ վերստուգել ենք։

ՅՈՒՅՑԱԿ

այս տարուայ Բագրեւանդ գաւառից Ռուսաստան գաղթածների.

		Տղամարդիկ	Սանդարեր
1	Թօփրաղ-գալէ գիւղաքաղաքից	4	56
2	Մօլլա-Սիւլէյման գիւղից	7	50
3	Ջէտական գիւղից . .	7	26
4	Խոշլան » . . .	3	10
5	Խաստուր » . . .	6	70
6	Զլկանի » . . .	5	15
7	Եխնթափէ » . . .	8	60
8	Խաչլու » . . .	2	35
9	Համուտ » . . .	7	60
10	Ղայաբէկ » . . .	3	9
11	Ոշխալէ Հաճի-Սաֆար և Փէրան գիւղից . .	17	32
12	Ղարա-քիլիսէ » . . .	9	27
13	Երանոս » . . .	4	13
14	Շամուլու » . . .	2	8
15	Իրիցու գիւղ (Ղարաքիլիսէի բաժնի մէջ). .	10	21
16	ըտր » . . .	4	7
17	Մանկասար » . . .	20	50
18	Գուբ-Ղռան » . . .	20	10
19	Զիրոյի » . . .	5	13
20	Մաղրայ » . . .	7	30
21	Վանքի » . . .	5	20
22	Ղաւմլի-Պուլախ գ. .	5	25
23	Բօդի (վերին ու ներք.)	10	30
24	Ղարաբաղար գիւղից .	6	20
25	Ճուճան գիւղից . . .	5	32
26	Քրուն, Մուսուն, Արծափ և Սարի գիւղ .	20	83
27	Եօնջալու գիւղից . .	5	57
28	Ղաղի գիւղից	3	30
		209	898

Գաղթում են ուրեմն Հայերը ակամայ թողնելով իւրեանց Հայրենիքը, անուշ Հողն ու Ջուրը, նախնեաց շիրիմներն ու սրբավայրերը. Հայրենի տունն և օջաղը, Հալածեալ գաղթում են աչքմայ, ինչքն ու ստացուածք, կայք ու գոյքը կորցնելուց յետոյ, կեանքն ու պտիւը փրկելու համար. ակամայ ենք ասում, որովհետև Հայերին ստիպում են գաղթել, ուղղակի, թէ անուղղակի, այդ միևնոյն է բոլորովին։

Եւ ոչ թէ ուրեմն միքանի անձինք և կամ նոյն իսկ ընտանիք են գաղթողներ, ոմ քաջդ ի քաջաց վամբերի, այլ մի կողմը թողնելով Ամերիկա պանդխտողները և վերջերս սահմանակից Պարսկաստան գաղթողները. միայն միքանի ամսուան ընթացքում, լոկ մի գաւառից, Բագրեւանդից, Կովկաս գաղթողների, և այն էլ միմիայն սոսկ մեր հաւաքած տեղեկութեամբ, թիւն է հասել հարիւր հազար։

Եթէ մենք, ո՞ պաշտօնական և անպաշտօն ասպետներ, լռենք, քարերը կ'աղաղակեն։

Բայց մինչև երբ։

Սոֆիան Կանայեանց։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վեհափառ Հայրապետը, ինչպէս հաղորդում է «Կասպի լրագիրը», Իր Օծման Հանդիսին Ս. Էջմիածին ժամանած բագուցիներին յայտնել է թէ մտադրութիւն ունի Զատկի տօներին այցելել Բագու քաղաքը։

***

Երկրիս պ. կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Ճերեմետիեվը, որ ինչպէս յայտնի է գտնվում է ներկայումս Մոսկուայում, «Նովոյէ Վրեմիա» լրագրի ասելով, Պետերբուրգ կը լինի դեկտեմբերի առաջին կիսում։

***

ՖԵԼԻԵՏՕՆ

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ԹՂԹԱԿԻՑԸ ՂԱԼԱԳԻՈՒՄ։

Անցոյս 20-ին «Արձագանք» լրագրի պ. Խմբագրի խնդրանօք թոյլտուութիւն ստանալով դպրոցիս (Մարիամեան Յովհաննեան) տեսչութիւնից, մի հազար ռուբլի ևս ստանալով «Արձագանք»-ի խմբագրութեանը հանգանակութեամբ հաստատած փողերից, շաբաթ օր երկու դաս աշակերտուհիներիս հետ պարապելուց յետոյ կառքով շտապեցի Թիֆլիզի երկաթուղու կայարան։

Ով ուրախ սիրտ և տրամադրութիւն ունենայ որ և է տեղ քէֆի ու ցնծութեան գնալիս՝ այն էլ ազատ արձակուրդի ժամանակ, թող նա եռանդով նկարագրէ թէ ինչպէս էին ողջերթ մաղթում, թող նա նկարագրէ երկաթուղու վրայ ունեցած տպաւորութիւնները, դաշտ, հովիտ, լեռ, գետ—շոգեկառքերից բաց կամ խուփ լուսամուտներից նշմարուող տեսարանները դիտելիս, որոնք մեծ մասով ակնապուսրար են և ընթերցողի սրտին հրճուանք կարող են բերել։ Ասացի որ ով սիրտ ու տրամադրութեան հետ ազատ ժամանակ ունենայ։ Բայց ես ոչ այն ունէի և ոչ այն, հրկիզեալ գիւղին հայելութիւն էի գնում. այդ էլ շատ թանգ գնով. այն է ամբողջ շաբաթ բացակայ պէտք է լինէի դպրոցից։

Զկնի ճաշու ժամի երկուսը չկար, երկաթուղին շարժուեց. անցայ Աղստաֆա, Գանձակ, Ելալխ, ոչ մի տեղ չիջայ. բայց մտաբերում էի որ այդ տեղերով իբրև ուսուցիչ կամ բանահաւաք գնացել եմ Ուտի, Ղուշի, Խաչէն, Գանձակ, Ջամշադին, Ղազախ, Սևան, Ս. Էջմիածին, Անի և այն և այն. . .

Այժմ դրանք չէին իմ փնտռածը. այլ Ուջար կայարանը իւր ջնջմայ տափաստաններով և այդտեղ հասայ գիշերուայ ժամի 12-ին։

Զոգեկառքի մէջ ես տխուր էի, մտածում էի անելիքներիս մասին։ Սրտով ուզում էի մի մարդ գտնեմ բագուեցի, շամախեցի, նուխեցի որ հարցասիրութեանս քիչ գոհացումն տայ. ոչ ոք չկար։ Երբ ծխողներից զզուելով մտամոլոր շրջում էի նստարանների արանքներով մի մարդ իմ ուշադրութիւնը գրաւեց. հայերէն լրագիր էր կարդում գրանակը բերանին։ Մի քիչ հարց փորձից յետոյ ես ցնծումի մէջ էի. գտել էի մի մարդ թէև Ղարաբաղցի, բայց շատ մօտիկ Ղալագէին և նրա ժողովրդին։ Կրթուած պարոնը, որ բնակում է Դէօկչայ աւանում, բաւական տեղեկութիւններ հաղորդեց, որոնք ամենն էլ ճիշդ Դէօզչայ գեղի ընթացքով. կարճ է բայց շատ տեղ ստիպուած էք ջրերն անցնելու, մինչև որ Բոզաւանդ գիւղի տակից բարձրանում էք վերև ու գիւղի միջով անցնելով գնում խառնուում այն ճանապարհին որ հարաւային կողմից ուղղակի Ղալագէն է տանում։ Երկրորդ ճանապարհը Դէօզչայից դուրս գալով մի անգամ գետն անցնում է ու խճուղիով ութ վերստ շարունակում։ Զամախու նախկին խճուղին է այդ։

Դէօզչայից 4½ ժ. ճանապարհ կտրելուց յետոյ թեքւում էք դէպի արևմտաարևելք և կեռմաններ տալով բարձրանում։ Զատ երկար կը լինէր մի առ մի նկարագրել, միայն այսքանն ասեմ, որ բլուրների ու սարաւանդների կողքերով, գլխներով անցնելով 4 ժամից յետոյ հասնում էք Ղալագէին։ Դէօզչայից մինչև Ղալագէ ոչ մի ջուր, ոչ մի առու չկայ. հողը կաւոտ է և բոզախոտով ծածկուած, խաշնարածութեան յարմար։

Թուրք գիւղերը բռնում են ցածր տեղերը, իսկ հայ գիւղերը բլուրների կատարներն ու հովասուն լանջերը։

Գանք Ղալագէին. այդ գիւղի ժողովուրդը, ըստ տեղական աւանդութեան, Նադիր-Շահի ժամանակ գաղթել են Ղարաբաղից, եկել Զամախուց 4 վ. հեռու բնակութիւն գտել։ Մի քանի ժամանակ մնալով մի անգութ խանի ձեռքից ազատուելու համար քոչել են եկել Դէօվ աւանաեալ տեղը, որ մօտ է այժմեան Ղալագէին։ Այդ Դէօվ կոչուած տեղը մի քանի տարի մնալով, վեր են կացել եկել տուն, բնակութիւն շինել մի սարհարթի արևելահիւսիսային լանջի վրայ, ուր այժմ գտնուում է Ղալագեցոց հանգստարանը, այգիների, կալերի մի մասը։ Այդտեղը խոնաւ է եղել. բնակութեան համար տեղափոխուել են դէպի տափարակ բլուրների լանջվէրներում հաստատուել և մինչև օրս այդտեղ են։

Գիւղը երկայն է և ձգուում է արևմուտքից արևելք. տները նայում են մեծ մասամբ արևելահարաւ, շինուած են բլուրների կողերի և փեշերի վրայ։ Գետ չունին, բլուրները խճճուած են և կազմում են կաւահողի անդունդներ, վիհեր, որոնցից մինը արևմտեան կողմից է ցածնում. դրա գոգումը խորը գնացող ճանապարհի կողքին բղխում են աջուձախ երկու աղբիւր, մինը ծծման, միւսը փոքր ինչ վարար, բայց ինչ վարար, հազիւ 50 կոպէկանոցի չաք ջուր։ Եւ այդ է ամբողջ Ղալագէի երեք հարիւր տնից բաղկացած ժողովրդի խմելու ջուրը։ Ինձ հաւատացնում էին որ տաւարի համար ձորում ուրիշ ջուր ունին, բայց երբ ես աղբիւրները տեսնելու էի գնացել, բոլոր անասունները այդտեղ էին ջրում։ Երկրորդ վիհը կոչում է «աղբահար». ցամաք է, ոչ աղբիւր ունի, ոչ առու։ Գիւղի կեղտերը և չքէիններն այդտեղ են թափում, մինչև օրս էլ մնում է այդտեղի փէիններ մէջ գիւղը ճարակող կրակի մնացորդը։ Երրորդ վիհը կամ ձորակը բնակութեան վերջն է և կոչում է «ջրի ձոր»։ Այդ ձորի մի կողմի տափը փլշկուել է բաւականաչափ տեղ. կողքերից ջրեր են ծրլծրլթում. Նշան է որ այդտեղ ջրամբար կայ։

Գիւղի տները մեծ մասով գետնափոր են քար դժուարութիւնով է ճարում գիւղում. աղիւս շինելու սովորութիւն չունին. Քար բերում են 12—14 վ. հեռաւորութիւնից. կան կղմինդրածածկ մի կամ երկյարկանի տներ, որոնց պատերը կամ մանրաքարեր են, կամ հում հաստ աղիւսից։

Տունը, գոմը և խոտի դէզը իրար կպած են գրեթէ։ Կալերը, կալապանները, յարդանոցները իւրից դուրս են. նոյնպէս խոտի դէզերի մեծ մասը։ Այգիները կալերից յետոյ են շարուած, որոնց մէջ են իրենց խոտածածկ մառանները գետնաթաղ կարասներով։ Ամենամեծ կարասը այդտեղ հաշում են 120 150 թունգի։ Գիւղի տները իրար կպած են և թաղերը նեղլիկ փողոցներով բաժանուած։ Եկեղեցուց և դպրոցից խոտի դէզերը դրուած են եղել 2 արշին հեռաւորութեամբ, իսկ երկու տուն այնքան կպած ժամի ու դպրոցի պատին, որ ոտնատեղ չկար անցնելու։ Եկեղեցին ու դպրոցը այդքան

Բուխարայի էմիր Միր-Սէյիդ-Աբդիւլ-Ահադ-Բօղատուր-խանը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրներին, առաջիկայ ամառը կամենում է գնալ Պեատիգօրսկի հանքային ջրերը։

Էմիրը մի նոր շքանշան է հաստատել որ կոչվում է «Թագի» նշան։ Այդ Բուխարայի երկրորդ շքանշանն է. առաջին շքանշանը հաստատել է այժմեան էմիրի հայր Մուզաֆար-խանը։ Բացի «Թագի» շքանշանը էմիրը հաստատել է նաև մի ոսկեայ շքադրամ «Բարի գործերի համար»։

* * *

Թիֆլիզի քաղաքային խորհուրդը իր նոյեմբերի 29-ի նիստում որոշեց ի միջի այլոց ապագայ 1894 թուի համար կազմած նախահաշուի սկզբնական քննութիւնը յանձնել մի յատուկ մասնաժողովի և իբրև անդամ ընտրեց պ. պ. Ալիխանեանին, Բաբեանին, Թամամշեանին, Խուդադեանցին (բժիշկ) և Փրիդոնեանին։ Պ. պ. Ագապեվի և Բաբեանի առաջարկութիւնը, աւելացնել քաղաքային դըպրոցի թիւը, որոշուեցաւ յանձնել ի մօտոյ կազմուելիք «ուսումնարանական մասնաժողովի» սկզբնական քննութեան։ Քաղաքիս առողջապահական կազմակերպութեան խնդիրը երկար ու բարակ վիճաբանութիւնների նիւթ տալով, որոնց մասնակցեցին Բաբեան, Բաբայեան, Լունկեվիչ, Մալինին, Մելիքեան, Շահ-Պարոնեանց, Փուչարեանց բժիշկները և մի երկու ոչ-բժիշկ—ոչ մի վախճանի յանգել չկարողացաւ և գիշերուայ 11½ ժամը լինելով, յետաձգուեցաւ մինչև միւս նիստը։

* * *

Տիկ. Վառվառէ Բոտինեանցի նախաձեռնութեամբ հիմնած խոհարարական դասընթացներն աւելի և աւելի գրաւում են հասարակութեան համակրութիւնը։ Այդ դասընթացները յաճախել ցանկացողների թիւը օր աւուր աւելանում է, այն ինչ վարչութիւնը նպատակայարմար է գտել ամեն անգամ քսան ուսանողուհիներից աւելի չընդունելու, որպէս զի իւրաքանչիւրը կարողանայ պահանջած չափով գործնական պարապմունքների մէջ վարժուել։ Եթէ դատելու լինինք այն կերակուրներով, որ ուսանողուհիք պատրաստել էին և որ հանդիսականները վայելելու հրաւիրուեցան անցեալ շաբաթ երեկոյեան, ապա կարելի է ասել որ յարգելի տիկնոջ ձեռնարկած գործը հետզհետէ աւելի և աւելի մեծ յաջողութեամբ է պսակվում։ Չ'ենք կարող չ'ողջունել և այն, որ մինչդեռ նախկին դասընթացների վերջին պատրաստուած խորտիկները թէ և ընտիր բայց թանկագին էին, այս անգամ հիւրերին հրամցրածները գուցէ գուրմաններին բաւականութիւն չտար, բայց այն բոլոր անձինք, որոնք կամենում են առողջ և համեղ սնունդ վայելել, կատարելապէս կարող էին գոհ մնալ։ Ինչպէս երեւում է տիկ. Բոտինեանցը կամենում է որ այս դասընթացները մատչելի և օգտաւէտ լինին ոչ միայն հարուստ դասակարգի տիկիններին և օրիորդներին, այլ և այն գերդաստաններին, որոնք ոչ թէ ժառանգած հարստութիւններով այլ իրենց տան գլխի անձնական աշխատանքով են ապրում։ Մի նպատակ, որ ի հարկէ վերին աստիճանի համակրելի է։

* * *

Այսօր շնորհալի դերասան Զիլիխանու բենեֆիսին վրաց մշտական խումբը ներկայացնելու է մեծ. Գաբրիէլ Սունդուկեանցի «Խաթաբալա» երեք գործողութեամբ կոմեդիան։ Արդեօք բնորոշ չէ հայ թատրոնական վարչութեան համար, որ մինչդեռ մեր տաղանդաւոր դրամատուրգի կենսական մեծ ճշմարտութիւն պարունակող պիեսները զարդարում են անընդհատ վրաց բեմը, հայկական Մելպոմէնի տաճարը տալիս է իւր հանդիսականներին ամեն ճշմարտութիւն ոտնակոխ անող մելօդրամներ...

* * *

Կովկասի բժշկական վարչութեան մէջ ստացած տեղեկութիւններից երեւում է, որ Հիւսիսային Կովկասում հոկտեմբեր ամսուայ ընթացքում ժանտախտից սատկել են 11,677 գլուխ տաւար և սպանուած են 696 գլուխ։

* * *

ԲԱԳՈՒԻՑ գործակատարները նոյեմբերի 27-ին մի աղերսագիր են մատուցել քաղաքագլխի պաշտօնակատարին, խնդրելով, որ նա պարտաւորեցուցիչ կանոններ մշակէ կիրակնօրեայ հանգստեան մասին։

* * *

Մինչդեռ հայ բժիշկները մեր քաղաքային խորհրդարանում միմեանց հասցէին զանազան կծու ակնարկութիւններ և ոչ պարլամենտական խօսքեր են ուղղում և քաղաքիս առողջապահական կազմակերպութիւնը անձնական հաշիւներ տեսնելու ասպարէզ շինում, Թիֆլիզում այլազգի բժիշկները իրենց մասնագիտութեամբ զբաղուելով, շարունակ գիտնական զեկուցումներ են անում Կովկասի կայսերական բժշկական ընկերութեան մէջ։ Այսպէս այսօրուայ հերթական նիստին Լեհացի բժ. Ի. Ի. Մինկեվիչը հետևեալ զեկուցումն է անելու. «Քարերը՝ իբրև բժշկական միջոց և իբրև մեծարանաց առարկայ Կովկասում», իսկ ռուս բժիշկ Վ. Մ. Կարպեչենկոն կարդալու է «Բազմապատկեալ էխինօկօկի մի դէպքի մասին»։

* * *

Պրոֆեսոր Զօյտօրեովը հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում այն երիտասարդների մասին, որոնք Ռուսաստանում զինուորագրութեան են կոչվում. Վերջին 10 տարուայ ընթացքում 3,141,000 մարդ են ենթարկուել բժշկական քննութեան, որպէս զի որոշուի թէ արդեօք պիտանի են զինուորական ծառայութեան համար։ Այս թուից 35%, այսինքն աւելի քան մէկ միլիօն երիտասարդ ազատուած են զինուորական ծառայութիւնից կամ որպէս անպէտք կամ առժամանակեայ արտօնութիւն ստանալով. զինուորական ծառայութեան համար անպէտքների այսպիսի տոկոսին կարելի է մեծ համարել ուրիշ պետութիւնների համեմատութեամբ. Ֆրանսիայում, օրինակ զինուորագրական ծառայութեան համար անպէտք ճանաչողների թիւը 25,6% է։ Ազգութիւններին գալով անպէտքների մեծագոյն տոկոսիքը տալիս են Լեհաստանի, Օստզէի նահանգները, Սիբիրիայի մասերից մի քանիսը, ռումանացիք և հրեաները։

Պէտք է աչքի առաջ ունենալ և այն որ Ռուսաստանում պահանջվում է որ ապագայ զինուորը հասակի 2 արշին և 2,5 վերշոկ բարձրութիւն ունենայ, այն ինչ Ֆրանսիայում պահանջվում—2 արշ. և 2,6 վերշ., Աւստրո Հունգարիայում—2 արշ. և 3 վերշ., Իտալիայում—2 արշ. և 3,1 վերշ. և Գերմանիայում—2 արշ. և 3,3 վերշոկ։

* * *

Օր. Պապայեանը, արքունական թատրոնի վարչութեան թախանձանօք, դարձեալ մի ամսով վերանորոգել է իր պայմանագիրը. այսպիսով Թիֆլիզի հասարակութիւնը կը շարունակէ վայելել շնորհալի երգչուհու խաղը մինչև յունուարի սկզբները։ Իսկ այսօր յարգելի օրիորդն ուղևորվում է Բագու, ուր այնտեղի հասարակութեան հրաւիրանօք երեք նուագահանդէս է տալու։ Առաջին կոնցերտը տեղի կ'ունենայ կլուբի մեծ դահլիճում դեկտեմբերի 2-ին։

* * *

Պարսից շահի ճանապարհորդութեան մասին «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ շահը յունիսին Կովկասի վրայով կ'ուղևորուի Պետերբուրգ, այնուհետև Փարիզ և Լոնդօն, ապա Վիեննայով կը վերադառնայ Պարսկաստան։

* * *

Թիւրքաց կառավարութիւնը, գնահատելով այն գործունէութիւնը, որ Պարսից հիւպատոս Րիզա-խանը ցոյց է տուել խօլերայի ժամանակ Թիֆլիզ քաղաքում, շնորհել է նորան օսմանեան «Մեջիդիէ» շքանշանի երկրորդ աստիճանը։

* * *

ՇՈՒՇԻԻՑ մեզ գրում են.

«Նոյեմբերի 24/25-ին տեղիս հասարակական ժողովարանի ապակէ դուռը կոտրելով անյայտ չարագործները ներս են մտնում և բուֆետչիկին խորը քնած գտնելով հանում են նրա գրպանից պահարանի բանալին, որտեղից վերցնում են 480 ռ. փող, երկու արծաթէ ժամացոյց, մի արծաթեա դաշոյն և անյայտանում։ Կասկածն ընկնում է ժողովարանի նախկին ծառայի վրայ, որ այդ երեկոյ ձուլավեր է եղել, իսկ առաւօտեան անյայտացած։

Տեղական ոստիկանութիւնը կարեւոր միջոցներ է գործ դրել և յոյս կայ, որ յանցաւորը կը բռնուի։

— Նորակառոյց օրիորդական դպրոցի շինութիւնը գովելի եռանդով առաջ է գնում։ Դպրոցի շէնքը պատրաստ կը լինի եկող յունվարին։ Շինութեան արտաքին տեսքը՝ թէև դեռ կիսատ, շատ լաւ տպաւորութիւն է թողնում տեսնողի վրայ։

* * *

Բուխարայի վաճառականները, որոնք Ռուսաստանի հետ առևտուր ունին, դիմել են ելևմտից նախարարին խնդրելով որ վերացուի Բուխարական «թէնգէ» կոչուած արծաթեայ դրամի Ռուսաստան ներմուծելու արգելքը, որովհետև այս արգելքը մեծ վնասներ է պատճառում Բուխարայի առևտրին։

* * *

Ինչպէս յայտնի է, «Մշակ» լրագրին Ներսիսեան դպրոցն է տալիս գլխաւոր և երկրորդական աշխատակիցների ամենամեծ կոնտինգենտը։ Մի երկու օրինակով շատանալու համար առաջ բերենք, որ խմբագրական ներկայ կազմակերպութեան մէջ շարունակում է առաջին ջութակը ածել պ. Խաչատուր Մալումեանցը, որի ամենամեծ տիտղոսի հիմքը՝ Ներսիսեան դպրոցից ստացած վկայականն է։ Այդ թերթի սրբագրիչ և քաղաքական լուրեր կազմողը պ. Տէր-Մարկոսեանն է, որ նոյն դպրոցին է պարտական իւր հասարակական դիրքը և այլն։ Այս պատճառով հասկանալի է դառնում նախ այդ թերթի բազմահմուտ բովանդակութիւնը, ապա այն երախտագիտական զգացմունքը, որ այդ թերթի աշխատակիցները տածում են դէպի իրենց բազմատանջ alma mater-ը։ Այդ զգացմունքը հասնում է այն աստիճանի, որ նոքա կամենալով երախտահատոյց լինել օրինակելի դասեր են տալիս նոյն իսկ դպրոցի դասատուներին.

«Մեր կողմից միայն մի դաս կը տանք Ներսիսեան դպրոցի դասատու Կանայեանցին» ասում են նոքա իրենց հայհոյեանքներով լի մի նկատողութեան մէջ պ. Կանայեանցի 'ի պատասխան «Արձագանքի» անցեալ համարում տպուած նամակի։ Այնուհետև սկսվում է այդ դասը. Նոքա՝ խմբագրական հայեցի մէջ գտնելով իրենց դէմքերը կոչում են պ. Կանայեանցին «անպատկառ», «լիրբ», «կեղտոտ», «գծուծ» և այլն։ Մենք կը նկատենք միայն, որ դաստիարակութեան այդ մեթօդը գուցէ և տեղի ունէր Մալումեանների աշակերտութեան օրով, որ խրատով կարելի է ենթադրել, աչքի առաջ ունենալով այդ «բարի պտուղներին», սակայն պէտք է նկատենք, որ այդ մեթօդը բոլորովին կորցրել է իւր թարմութիւնը։

Գալով այն հաստատութեան թէ «ոմն Ստեփան Կանայեանց, որը տեղ է ստացել Ներսիսեան դպրոցում և այդ պատճառով էլ դարձել է «Արձագանքի» աշխատակից», պէտք է նկատենք, որ եթէ պ. Քալանթարը տեղեակ լինէր գերմաներէն լեզուին, մի «ոմն» չէր անուանել այն մարդուն, որ ամենաընտիր գերմանական թերթերին աշխատակցել է յօդուածներ գրելով հայկական խնդրի մասին. իսկ եթէ խմբագիր դառնալուց առաջ պ. Քալանթարը հետևէր մեր պարբերական հրատարակութիւններին, նա կը գիտենար, որ պ. Կանայեանն աշխատակցել է «Արձագանքին» տակաւին Գերմանիայում ուսանող եղած ժամանակ։ Չէ, ճշմարիտ, պ. Քալանթարը լաւ կ'անէր եթէ քիչ մը ծանօթանար մեր գրականութեան գործիչների հետ, և մենք խորհուրդ կը տայինք այդ ուսումնասիրութիւնն սկսել հէնց «Մշակի» աշխատակիցներից։ «Немного освѣжить, немного перемѣнить, чтобы польза была!», ինչպէս ասում է «Փատենիցայի» հերոսը։

* * *

Պ. Պ. Մ. ՆԻԿՕԼՍԿՈՒ ԵՒ Ս. ԻՎԱՆՈՎՍԿՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Մոսկուայի կայսերական հնագիտական ընկերութիւնը իւր վերջին նիստում՝ մայիս ամսին՝ վճռեց իւր անդամներից երկուսին այս տարի ուղարկել Ռուսաց Հայաստան հնագիտական խուզարկութիւններ անելու դիտաւորութեամբ։ Ընտրուած անդամներն էին պ. պ. Մ. Նիկոլսկին և Ա. Իվանովսկին, որոնք յունիս ամսին ճանապարհ ընկան դէպի Կովկաս, իսկ սեպտեմբերի սկզբին վերադարձան Մոսկուայ։

Նոյեմբերի 19-ին ընկերութեան նախագահ կոմսուհի Ուվարովի տանը, ի ներկայութեան Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչի, կայացաւ ընկերութեանս նիստը, ուր Պ. Նիկոլսկին կարդաց իւր ընդարձակ և գեղեցիկ հաշիւը Հայաստանի հնաւեան նահանգում կատարած խուզարկութիւնների մասին։

Ժամանելով Թիֆլիզ յուլիս ամսին, պատմում է Պ. Նիկոլսկի, ես ընկերիս հետ ներկայացայ Կովկասի պ. կառավարչապետ գեներալ Շերեմետևին, յայտնեցի մեր գալստեան պատճառը և խնդրեցի նպաստել մեզ իւր կողմից մեր հնագիտական խուզարկութիւնները դիւրացնելու համար։ Նորին բարձր գերազանցութիւնը սիրով ընդունեց մեզ և խոստացաւ կարգադրութիւն անել այդ մասին և գրել նահանգապետներին ու գաւառապետներին։ Խոստացած աջակցութիւնը մենք լիովին վայելեցինք իւր ժամանակին։ Այնուհետև մենք այցելեցինք Կովկասի ուսումն. շրջանի պ. հոգաբարձու Նորին գեր. Եանովսկուն և մանրամասն յայտնեցինք մեր դիտաւորութիւնները։ Պ. հոգաբարձուն մեծ հաճութեամբ մեզ լսեց, իւր կողմից էլ խրախուսեց, խոստացաւ լրջմտութեամբ օգնել մեզ և հրաժեշտի միջոցին խորհուրդ տուաւ, որչափ կարելի է գրաւել այս գործին հայոց տեղական ուսումնարանների երիտասարդ ուսուցիչներին, արծարծել նոցա մէջ սէր դէպի հնութիւնները, նախնեաց յիշատակարանները և յայտնել իրան այն պարոնների անունները, ով փոքր ի շատէ աջակից կլինին մեզ մեր ձեռնարկած խուզարկութիւնների ժամանակ և ես նոցա կվարձատրեմ 'ի խրախոյս ուրիշներին»։ Մի քանի պաշտօնական այցելութիւններից յետոյ մենք, վերջապէս, ճանապարհ ընկանք դէպի Երևան։ Իմ նպատակս էր յատկապէս տեսնել բոլոր այն գիւղերը, տեղերը ու վայրերը, ուր գտնուած են Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանի և այլոց սեպաձև արձանագրութիւնները և նորից օրինակել նոցա կամ լուսանկարի միջնորդութեամբ և կամ էստամպաժով, վասն զի յիշեալ արձանագրութիւնների մեծագոյն մասն բաւարար ճշդութեամբ չէ կարող պարծենալ և շատերը անխնամ են հանուած կամ օրինակուած, նոցա իմաստն տեղ տեղ մութ է և անհասկանալի։ Ճանապարհին գիտնականները բաժանուում են. պ. Նիկոլսկին դիմում է դէպի Էլար գիւղը, իսկ պ. Իվանովսկին գնում է դէպի Գէօգչայ, որպէս զի Երևանում նորից ընկերանալով միասին ներկայանան գեներալ Ֆրիզէին։ Էլարի սեպաձև արձանագրութիւնը պ. Նիկոլսկին ընդօրինակում է և ապա գնում Երևան, ուր մի քանի օրից Իվանովսկին էլ հասնում է և եթէ չեմ սխալվում, ներկայանում են գեներալին։ Այնուհետև Նիկոլսկին գնում է Ս. Էջմիածին. իսկ Իվանովսկին վերադառնում է Գէօգչայ (Գեղամայ ծով) այն դիտաւորութեամբ, որ լճի բոլոր չորս կողմերը կարողանայ շրջել, գննել և երկրախօսական խուզարկութիւններ անել։

ճնշող գիւղացիք իրանք հազար չորս հարիւր թաղարի տեղ (թաղարը 20 փութ) վարելահող ունին, որի մի մասը այգիներ են շինել, միւս մասը դեռ վարում են, իսկ արաւքի համար արօտատեղի ունին երեք հարիւր թաղարի տեղ, որ կազմում են ձորաբերանները, բլուրները, ցաքուտները խոտոտ տեղերով։

Այդ գետիններն ամենն էլ արքունական են, իւրաքանչիւր թաղարատեղ վարելահողին ղալագեցին մօտաւորապէս վճարում է 2 րուբլի։ Տարեկան միայն Ղալագէ գիւղը հարկ է տալիս չորս հազար մանէթ։

Ահա թէ 280 տան վրայ որքան ծանրութիւն կայ, ամենն էլ հողային տուրքեր։ Դեռ գիւղը չմտած գիտէի որ պարտքակոխ շատ գիւղացիք կլինին. երկրագործի կամ այգեգործի հոգին մեծ մասով գիւղի վաշխառուների ձեռին է լինում։ Այդպիսի մի քանի անձանց մասին լսել էի, որ կան և խիստ կեղեքում են։ Բայց իմ զարմանքս այն տարաւ, որ այդ կեղեքիչների մասին լսեցի,—նրանք երիտասարդ մարդիկ էին և քիչ-շատ կրթուած։

—Ախր ուսումով մարդիկ լինին ու խեղճ գիւղացոց գրփէն, հարցնում էի ուղեկցիս։

—Հեռի քու երեսից, նրանց ուսումը իրանց կտրի, բա գրքում չէ՞ն. հալա ուտում էլ են, վրայ էր բերում գլուխը օրօրելով Ալէքսանը, որ ինքն էլ գրագէտ էր հայերէնից, ռուսերէնից, եղել էր Շամախու քաղաքային դպրոցում։

Լսեցի որ Բագուից եկող Դիլդարեանց ու Քոչարեանց յարգոյ պարոնները Ղալագէ ժամանելով իջել են՝ երևի իբրև իրանց նախածանօթների—գիւղի հարստահարող կոչուածների տանը։ Իմացայ որ անպայման լսել են աւելի երկու անձի. Եաբուլեանց Հ-ին և Տատուրեանց Բ-ին, թէև ընտրուած մարդկանց մէջ եղել են Տէր-Սահակեանց Ս. և Ստեփանեանց Ս.

Ես հեռուից լսած էի Պր. Դիլդարեանցի և Հ. Քոչարեանցի բարեխղճութեանց մասին, հաւատում էի որ նրանք կուզէին արդարութեամբ գործ տեսնել։ Բայց ցաւելով պէտք է ասեմ, որ անթիւ տրտունջներ լսեցի նրանց մասին։ Ամէնքն էլ կրծքի տախտակները ծեծելով ասում էին, որ նրանցում մեղ չկար, նրանք արդար էին, մեղքը վեաքիլներին էր, որ սխալեցնում էին, և ողորմութիւնը բաժանել էին տալիս նրանց, որոնք կարիք չունէին, և անտես էին անում նրանց, որոնք ամենից շատ վնասուած էին հրդեհից և կարօտութեան մէջ էին։

Ես վճռեցի այդ մարդոց մօտ չիջնել, նրանց ճանկը չընկնել։ Մտածում էի այնպիսի տան իջնել, որ հրդեհից վնասուած չլինի ու ինձանից ակնկալութիւն չունենալով կարող լինի ճիշտ տեղեկութիւններ տալ գործող անձերի և պատահած դէպքերի մասին։ Մտադիր էի ուսուցչի մօտ իջնել։ Նրա մասին էլ լսեցի, որ հոգաբարձուների հետ թունդ կռուի մէջ է։ Ահա թէ ինչպէս։ Այդ մարդը, որի ազգանունն է Յարութիւն Բունեաթեանց, երկու տարի ուսուցիչ է եղած Ղալագէ. հոգաբարձուք՝ Հ. Եաբուլեանց և Ց. Տէր-Մարկոսեանցն են եղել, որոնք տարու վերջին մնացած ռոճիկը տալով ասել են՝ որ այլ ևս չգայ, իրենց հարկաւոր չէ։ Նրա տեղ հրաւիրել են ուրիշ մարդու, որից գոհ են եղել, երկրորդ տարին կամեցել են հրաւիրել, բայց Շամախու սրբ. առաջնորդը իբր չի ուզեցել նրան, (Խ. Խաչատրեանց, այժմ Նուխի) այլ կրկին ուղարկել է Ղալագէ Բունեաթեանցին պաշտօնական թղթով։ Մի պաշտօնական թուղթ էլ հոգաբարձութեան վրայ, թէ այս ուսուցիչն ուղարկում եմ, տարեկան 450 ռ. ռոճիկով. այլ և տալու էք տուն, ծառայ, փայտ և ջուր։ Հոգաբարձուք գրում են սրբ. առաջնորդին, որ ձեր ուղարկուած ուսուցչին վաղուց ճանապարհ ենք ցոյց տուել, պահողը չենք, ուրիշն ուղարկեցէք, եթէ չէք ուզում դպրոցը այդ պատճառով փակուի։

Սեպտեմբեր 15-ից վարձուած ուսուցիչը նոյն ամսի 23-ին ժամանելով Ղալագէ, մնում է անգործ, հոգաբարձուք չեն ընդունում, ասում են, չետ գնա։ Դպրոցի մէջ այդ ժամանակ ամբարի ցորենն է լինում ածած։ Ուսուցիչը ո՛չ բընակարան է ունենում և ոչ մանուկներ ժողովելու տեղ. այդ միջոցին սրբ. առաջնորդը լինում է Ս. Էջմիածին. ուսուցիչը սպասում է որ Սրբազանը վերադառնայ։ Մինչև նրա վերադառնալը չնչին բանից առաջացած անողորմ հրդեհը լափում է Ղալագէն։ Ուսուցիչը հրդեհից յետոյ համոզւում է, որ իւր Ղալագէում մնալը զուր է, արտասուքի և լացի ծովից հեռանալը կարևոր է համարում։ Գալիս է Գէօգչայ և նամակ գրելով Սրբ. առաջնորդին սպասում նրան այդտեղ։ Վերջապէս գալիս է Առաջնորդը և Գէօգչայից վերցնելով իւր հետ ուսուցիչ Հ. Բունեաթեանցին վերստին բերում Ղալագէ։ Հրկիզեալ ընտանիքներին մխիթարելուց յետոյ Սրբազան հայրը ուսումնարանի հարցն է առաջ բերում։ Հոգաբարձուք տրտունջ են անում ուսուցչի դէմ և առաջարկում են փոխել, ուրիշ մարդ բերել նրա տեղ։ Ոչ միայն նրանց առաջարկը չի ընդունում Սրբ. առաջնորդը, այլև կարևոր է համարում հոգաբարձուներին ազատ կացուցանել պաշտօնից, որովհետև ժամանակը մի տարուց առաջ են լրացրել, և նորերն ընտրել։

Առաջին հոգաբարձուք երեքն էին՝ Տէր-Սարգիս Տէր-Սահակեանց, Հայրապետ Եաբուլեանց, Յարութիւն Տէր-Մարկոսեանց. պաշտօն վարել են չորս տարի շարունակ։ Այժմ նրանց ազատ համարելով՝ պաշտօնի է կոչում ժողովրդի ցուցմամբ Սամուէլ Տէր-Սահակեանցին, Օհանէս Սևումեանցին, Բալասի Ծատուրեանցին և նախագահ նշանակում Տէր-Ներսէս Տէր-Գասպարեանցին։

Նախկին հոգաբարձուք վշտացած այդ բանից կարողանում են իրանց արբանեակների միջոցով ժողովրդին գրգռել Սրբազանի արածի դէմ և ասել թէ մենք այս տարի ոյժ չունինք ուսումնարան պահելու. աղքատացել ենք, որտեղից վարժապետի փող տանք։ Սրբ. առաջնորդը համոզում է, որ միամիտ լինին, այս տարի Ղալագեցիք ուսումնարանի ծախք չեն ունենալ, ամենն էլ ինքն է վճարելու թէ վարժապետի ռոճիկը, թէ դպրոցի տան և ուսուցչի բնակարանի վարձը։ Վարձում է սենեակներ. մինը դպրոցի համար, միւսը ուսուցչի բնակուելու։ Ամենքին էլ յուսադրելով մեկնում է Սրբ. առաջնորդը Ղալագէից և խոստանում է շուտով օգնութիւն ուղարկել փողով, նաև Նորընտիր հոգաբարձուաց հաստատման թուղթը շտապեցնել։

Ուսուցչի մասին այս բաները լսելով խոր վշտացայ։ Ուղեկիցս տեսաւ, որ դըժուարանում եմ ուսուցչի մօտ իջնել, խնդրեց իրանց տուն գնամ. դեռ ճանապարհին էինք, գիւղից քիչ հեռու։

—Ուղիղ ասա, դուք էլ այրուած բան ունի՞ք, հարցրի համեստ Ալէքսանից։

—Այո, այրուել է մեր գոմը, մարագը, խոտը, բայց տունը փրկուել է, ուր բնակում է վարժապետը։

—Զնեղանաս, ասեցի նրան, ձեր տանն էլ չեմ իջնիլ, համ այրուածի մէջ մասն ունիք, համ էլ վարժապետը ձեր տանն է ապրում։ Հակառակ մարդիկ իմ պատճառով քեզ ու վարժապետին զուր կը բամբասեն ու վնաս կը տան։ Ես կուզեմ մի ծեր մարդի տուն գնալ, կա՛յ այնպէս լաւ ծերունի, որի տունը անվնաս մնացած լինի։ Ծերի խորհրդին կը դիմեմ, նա հոգուց մօտիկ կը լինի, սուտ չի խօսիլ, իւր հոգուն մեղք չի բերիլ ուրիշի համար։

—Մեր գիւղում կայ մի ծեր մարդ, անունն է Ղարա-ամիր, շատ պատուական, շատ հացով, հիւրասէր, ոնց որ հայր Աբրահամը։

—Դրուստ։

—Դրուստ. հախ Աստուած։

—Դէ ձիդ քշիր դէպի Ղարա-ամիր դուռը, ասեցի ուղեկցիս։

Գիւղին մօտեցել էինք, հարաւային կողմից մտնելով գիւղը հանդիպակաց լանջվերի վրայ փռուած տեսնում էի տըներ, խոտի դէզեր, և յետոյ ներքև սալիտակ խարխուլ պատեր, աւերակներ, մոխրածածկ բակատեղեր, փոսեր, քանդուածներ։

Մի րոպէ ինձ թուաց թէ մտնում եմ Անիի լուռ աւերակները։ Ամսոյս 21-ին կիրակի օրը գկնի ճաշու ժամի 3 ին Ղալագէն տեսնելիս մտաբերեցի 1884 թ.

«Ես վաղուց փափագ ունէի, շարունակեց պ. Նիկոլսկին, այցելել Հայոց ազգի սրբավայր Ս. Էջմիածինը, տեսնել նորա հնութիւնները, ծանօթանալ միաբանութեան հետ։ Մ. կ. հնագիտական ընկերութեան նախագահ կոմսուհի Ուվարովան այդ մասին առաջուց արդէն պաշտօնապէս գրել էր Ս. տեղակալ Երեմիա եպիսկոպոսին և երբ ես հասայ Ս. Էջմիածին, Նորին Սրբազնութիւնը կարգադրել էր տալ ինձ լաւագոյն սենեակ և առաջնորդել ինձ դէպի ամենայն կողմ։ Ես ուրախութեամբ պիտի արձանագրեմ այստեղ, որ Էջմիածնում ես հանդիպեցայ ուսումնական անձանց, որոնք սերտ յարաբերութիւն ունէին եւրոպացւոց գիտնականաց, զորօրինակ պրոֆ. Լեմանի, Բեկկի, Կոնեբիրի, Ֆր. Միւլլերի և այլոց հետ։ Տեսայ Մայր Աթոռի ձեռագիրներով հարուստ մատենադարանը, ուր միայն Մ. Խորենացու Պատմութեան բնագրի 15 օրինակներ կան, որոնք մինչև այսօր միմեանց հետ չեն համեմատած, ուստի պէտք է կարծել, որ մինչև ցայժմ եղած Խորենացու Պատմութեան զանազան թարգմանութիւնները չեն կարող ճիշդ լինել։

Սակայն, դժբախտաբար, ձեռագիրների ցուցակը առաջ չէ գնացել 1881 թուականից գլխի, երբ կոմս Ուվարովը այցելել էր Էջմիածինը. գրացուցակը 60-ական թուականներից է և նորը տակաւին չէ հրատարակուած։ Սեպաձև արձանագրութեանց քարերը թէև զետեղուած են մի առանձին սենեակում մինչև նոր թանգարանի շինութիւնը, սակայն զանազան լուսանկարների շնորհիւ այդ քարերը շատ կեղտոտած են. երևում էր որ ամենայն ոք արձանագրութիւնները հանելու միջոցին քարերը մրոտում էր, բայց հոգ չէր տանում նոյնը լուանալու և սրբելու։ Այս արձանագրութեանց թիւը հասնում է մինչև տասն։ Էջմիածնում անտանելի օդի տաքութիւնից տկարանալով, ես քաշուեցայ դէպի Ալագածը և շատ տեղեր ճանապարհորդեցի յարգելի հ. Գալուստ Տէր-Մկրտչեան աբեղայի հետ, որ չնայելով իւր ոտերի տկարութեան (նորան տեղից ամռով են տանում ու բերում), յանձն առաւ ուղեկցել ինձ և ցոյց տալ ու բացատրել մերձակայ շէնքերի աւերակները, հնութիւնները։ Նոյն օգնութիւնը հասուցանում էին ինձ հայերը ամենուրեք, մանաւանդ ուսուցիչ Մարգարեանցը և մինչև անգամ քիւրդերի բեկերից մէկն էլ յետ չմնաց այս գործում։ Սեպաձև արձանագրութեանց վայրերը տեղացիք շատ լաւ ճանաչում են և մեծ պատրաստութեամբ առաջնորդում էին ինձ դէպի այդ կողմերը։ Պատահում էր երբեմն մեզ արևի հրակէզ ճառագայթների տակ, թէ ոտով և թէ ձիով, թափառել ձորերի, հովիտների մէջ, բարձրանալ լեռների վրայ. ճանապարհին ընկերներս հիւանդանում էին, ջերմ տանջում էր մեզ և շնորհիւ քինայի հարուստ պաշարին, մենք կարողանում էինք շարունակել մեր ճանապարհը։ Ձիով մենք 300 վերստ արշաւեցինք։ Մինչև 10,000 ոտնաչափ բարձրացանք լեռների վրայ արձանագրներ որոնելով և 'ի միջի այլոց՝ յաճախեցինք Անբերդ Բիւրականը, որ Յովհան պատմաբան կաթողիկոսի IX-դ ա. սեպհական կալուած է եղել, իսկ արդ Էջմիածնի կաթողիկոսաց ամարանոցն է, տեսանք Մարմաշէնը, որոց շինողն է Վահրամ Պահլաւունի իշխանը XI. այժմ բոլորովին վերանորոգուած է. գնացինք Հառիճոյ վանքը, որ կառուցել է Զաքարէ սպասալարը XII դարում. դորան նորոգել են Աղէքսանդրապօլի հայերը։ Յիշեալ շէնքերի ճարտարապետական ոճի մասին ես դիտաւորութիւն չունիմ խօսելու. ցանկացողը դոցա վրայ տեղեկութիւնները կարող է գտնել Հ. Գ. Ալիշանի «Այրարատում և Շիրակում»։

Օգոստոս ամսի կէսում մեր ճանապարհորդները իջնում են Արաքսի հովիտը հին Արմաւրի աւերակները տեսնելու համար. այս քաղաքը, պ. Նիկոլսկու կարծիքով, պատկանում էր ոչ թէ Հայկազանց հարստութեան, այլ Ուրարտուի թագաւորների շրջանին և նորա բուն տեղը որոնելու է Դաշբուռունի (Փայաքիթ) շրջակայքում Արարատի ստորոտներում, ուր գտնուած են բևեռագիր արձանագրութիւններ, այս վերջիններս նոքա կրկին հանում են լուսանկարի միջոցով։ Յիշեալ արձանագրութեանց ցուցումների վրայ լինելով՝ մեր գիտնականները սկսում են որոնել ուրարտական քաղաքն Լուխիունինի և Արարատի լանջերի, ինչպէս և հովտում գտնում են հին պալատի, տների և ընդարձակ բերդերի ճարտարապետական մնացորդները, որոնք տասնեակ վերստերի տարածութեամբ ձգւում են հեռու։ Այդ տեղերում նոքա պեղումներ են անում և հին նախաքրիստոնէական քաղաքի հետքերն են գտնում (12 վերստի չափ է աւերակների շրջանը). շարունակել պեղումներն անհնարին էր, շատ ժամանակ կը խլէր նոցանից. ուստի նոքա արդէն մտածում են յետ դառնալու։ Պ. Իվանովսկին Գեօկ-չայի հարաւային ափում եղած սեպաձև արձանագիրը՝ Ալաղալու գիւղի մօտ, մեծ դժուարութեամբ և առաջին անգամ կարողանում է հանել. Վալդեմար Բելկը միայն երեք տող էր կարողացել օրինակել. իսկ պ. Իվանովսկուն յաջողում է բոլոր 19 տողերը օրինակել էստամպաժով։ Պ. Նիկոլսկին կարգալով այդ արձանագրութիւնը, ասում է թէ՝ դա պատկանում է Րուսա կամ Ուրծա թագաւորին, որ Սարդուրիսի որդին էր և ապրում էր VIII կիսում Ն. Ք. : Այս թագաւորից մինչև այժմ չէր գտնուած արձանագրութիւն և նա յայտնի էր մեզ Ասորեստանեայց Սարգոն թագաւորից մնացած արձանագրութիւնից, ուր Ուրծան երևում է մեզ իբր հզօրագոյն և անընկճելի թշնամի Ասորեստանի։ Սոյն արձանագրութեան էջերում Ուրծան պատմում է թէ ինքը նուաճել է 23 երկիրներ և այլն։

***

1893 թ. 25 Նոյեմբերի
Մոսկուա։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՈՒՄԱՅԻԵԱՆ ՄԶԿԻԹԻ ՀՐԴԵՀԸ

Աղեքսանդրիայի Ալ-Ահրամ լրագիրը մանրամասն նկարագրում է այն զարհուրելի հրդեհը, որ տեղի է ունեցել Դամասկոսում հոկտեմբերի 2-ին առաւօտեան 10½ ժամին. Հրդեհը պատահում է Դամասկոսի Ումայեան մզկիթում։ Կրակը երևացաւ առաջ տանիքի արևմտեան կողմում և այստեղից սարսափելի ուժով տարածուեցաւ, այնպէս որ մի ժամ չանցած տաճարը (ներքին սրբութիւնը) ամեն կողմից այրւում էր։ Հրդեհի լուրը արագութեամբ տարածուեցաւ քաղաքի մէջ և բացի հրդեհաշէջներից, խռնուեցաւ բնակիչների ահագին բազմութիւն և եկան նոյնպէս և քաղաքում գտնուող զինուորները օգնութեան։ Չնայելով ամենքի եռանդուն աշխատութեան անհնարին եղաւ մզկիթը կրակի ճանկերից ազատել. նա բոլորովին քանդուեցաւ, բացի հիւսիսային գաւթից և Հուսէյնի շիրմից, որ գտանւում էր մզկիթից դուրս, արտաքին սրբութեան մէջ։ Այս հրդեհը սկսաւ տարածուել դրացի բազարներում, որոնք գտանւում են մզկիթի հարաւային կողմում, այրուեցաւ նոյնպէս և Խամրավի թաղն, որ 50 տներից է բաղկացած։ Արևելեան կողմում այրուեցան մի քանի թաղեր։ Հրդեհը միւս օրն էլ շարունակւում էր։

Մահմեդականները վհատութեան մէջ են, որովհետև այդ մզկիթը ամենահին յիշատակարաններից մէկն էր (շինած է Հիջրայի առաջին դարում) և նորա մէջ էր Եահեայ մարգարէի գերեզմանը։

Հրդեհի պատճառը յայտնի չէ, բայց հաւանական է, որ նա պատահել է մշակների անզգուշութիւնից, որոնք զբաղուած էին տանիքի նորոգութեամբ։ Այրուեցան 26 տուն և 175 խանութ։

Նոյն լրագիրը հաղորդում է հետաքրքրական տեղեկութիւններ Ումայեան մզկիթի մասին։ Այդ մզկիթը կառուցել է Ալվալիդ-Բէն-Աբդիլ մալիքը։ Նորա տեղում կանգնած էր վաղ քրիստոնէական եկեղեցի յանուն ս. Յովհաննու։ Երբ մահմեդականները Քալէդ-բէն-Ալվալիդի առաջնորդութեամբ նուաճեցին Դամասկոսը (Հիջրայի 14 թուականին), այդ եկեղեցու կէսն իրանց համար առան։ Վերջը բոլոր եկեղեցին անցաւ մահմեդականների ձեռքը Ալվալիդ-բէն-Աբդիլ մալիք ամիրապետի ժամանակ, որ դորա փոխարէն մեծ գումար վճարեց քրիստոնէաներին և տուեց մի քանի եկեղեցիներ։ Վերոյիշեալ եկեղեցու տեղում ամիրապետը սկսաւ կանգնել մզկիթ, որի համար Բիւզանդիոնից ապսպրեց 12,000 մշակ և արհեստաւորներ, նոյնպէս և փորագրիչներ ու նկարիչներ։ Մզկիթի շինութիւնը 9 տարի տևեց և այդ միջոցում մարմարի վրայ աշխատում էին 1,000 հոգի։ Շինութիւնը նստեցաւ մօտ 100 միլլիօն դինար։ Մզկիթում կային մօտ 700 ոսկեայ շղթաներ, որոց վերայ կախուած էին կանթեղներ ու ջահեր։ Պատերը ծածկած էին փորագրութիւններով ոսկով ու ամենաընտիր միւսիւնով կամարները, բարձր սիւները, մեծ տաքսեայ և ոսկեթել անկուածից վարագոյրները այդ ամենը վկայում էր շինուածքի հոյակապութիւնը։ Պատի վրայ ոսկեայ տառերով արձանագրած էր. «Ալլահն է մեր Աստուածը և մենք երկրպագում ենք միայն Նորան, միակ Աստծուն։ Այս տաճարը կանգնել հրամայեց Աստծոյ ծառայ Ալվալիդը, հաւատացեալների իշխողը, Հիջրայի 87 թուականին Զիլհիջէ ամսին»։ Մզկիթի երկարութիւնը արևելքից դէպի արևմուտք 300 կանգուն էր, իսկ լայնութիւնը հիւսիս հարաւ 202½ կանգուն։ Մզկիթը 4 դուռն ունէր։ Նորա մէջ գտանուած էր ի միջի այլոց և մի նկարազարդ պահարան, ուր դրած էր Օսմանի Ըսորէք ուղարկած ղուրանը։ Մզկիթն աւելի հոյակապ էր անում նորան գմբէթն, որի շրջապատը 120 կանգուն էր և ծածկած էր արճիճով, որ կապում էր նրա տանիքի միւս մասերի հետ։ Դամասկոս գնացող ճանապարհորդը դեռ բաւական մեծ հեռաւորութիւնից զուարճանում էր այդ երկնաղէշ գմբէթի տեսքով։

Մահմեդական ճարտարապետութիւնը կորցրեց իւր թէ յիշատակներով և թէ հնութեամբ թանկագին յիշատակարաններից մէկը։ Հաւականալի է, թէ մահմեդականները որպիսի զգացմունքով պիտի նայեն հոյակապ շինուածքի ողորմելի մնացորդի վերայ, շինուածքի, որ այնքան աշխատանքի և ժամանակի պտուղ էր։

—

ԲՈՒԼՂԱՐԻԱ. — Բուլղարիայի ազգային ժողովի նիստը նոյեմբերի 17-ին շատ աղմկալից էր։ Աղմուկ հանեց «դիմադրող կուսակցութիւնը», որ հարց տուեց Ստամբուլովին Սօֆիայից մի քանի քաղաքացիների իբրև անվստահելի անձանց աքսորման առիթով։ Ստամբուլովից պահանջում էին վճռական պատասխան թէ արդեօք այդ անձինք նորա կարգադրութեամբ աքսորուեցան և թէ նա Ստամբուլովը ինչպէս կըբացատրէ բուլղարական սահմանադրութեան այդպիսի խախտումն, սահմանադրութեան, որի զօրութեամբ Բուլղարիայում մարդուս կարելի է զրկել ազատութիւնից միայն ևեթ դատաստանական քննութեամբ։ Ստամբուլովը պատասխանեց, որ Սօֆիայից չքրաւլի աքսորուած են մի քանի ոգիք և նոյն վիճակին պիտի ենթարկուին շուտով էլի մի քանիսը։ Նա այդպէս վարուել է առաջ էլ և նոյնը կըգործէ և ապագայումն էլ, քանի որ կըվարէ իւր պաշտօնը։ Ստամբուլովի կարծիքով [illegible], նորա դէմ պէտք է գործել իւր ժամանակ և այն ամենայն եռանդով ու խստութեամբ. միայն այսպիսի գործավարութեամբ կարելի է երաշխաւոր լինել երկրի խաղաղութեան համար։ Բուլղարական ազգային ժողովը գրեթէ միաձայն արդարացրեց Ստամբուլովի գործողութիւնները։

—

ԱՆԳԼԻԱ. —Այս օրերս վախճանուել է հռչակաւոր անգլիական բնագէտ Տինդալը, որի գրուածքները թարգմանուած են բոլոր եւրոպական լեզուներով։ Տինդալը ծնուել է մի աղքատիկ իրլանդական գիւղում և չքաւոր ծնողների զաւակ լինելով՝ չէ կարողացել ժամանակին բաւարար կրթութիւն ստանալ։ Հազիւ 28 տարեկան հասակում նա կարողանում է Գերմանիա գնալ իւր ուսումը կատարելագործելու համար և Բեռլինում լսում է անուանի Բունզէնի և Մարբուրգում Մագնուսի դասախօսութիւնները։ Գերմանիայում նա սկսում է իւր գիտնական աշխատութիւնները, որ յետոյ հռչակեցին նորա անունը։ Բնագիտութեան (ֆիզիկայի) մէջ ահագին նշանակութիւն ունեին նորա հետազօտութիւնները ֆիզիկական զանազան երևոյթների վերաբերութեամբ։ Տինդալը մի քանի համալսարանից դոկտորութեան կոչումն էր ստացել և անգլիական ու այլ երկիրների շատ գիտնական ընկերութեանց պատուաւոր անդամ էր։

—

ԳԵՐՄԱՆԻԱ. — Լրագիրներն հաղորդում են որ ռայխստագի այն նիստը, որում որոշուել է ճիզուիտների աքսորման վերաբերեալ օրէնքը վերացնել մի անօրինակ պատկեր է ունեցել։ Օտար տէրութեանց ներկայացուցիչները գրեթէ բոլորը ներկայ են եղել, հանդիսականների համար նշանակուած տեղերը բոլորը բռնուած։ Ընդունուած սովորութեան հակառակ երկրորդ ընթերցումը տեղի է ունեցել անմիջապէս առաջնից յետոյ։ Կաթոլիկ, լեհացի և էլզասցի բոլոր պատգամաւորները ռայխստագումն են եղել։ Կոմս Հոմպէշ մի ազդու ճառ է արտասանում ի պաշտպանութիւն ճիզուիտների վերաբերեալ օրէնքը վերացնելու առաջարկութեան։ Յանուն կրօնական խաղաղութեան նա հրաւէր է կարդում արդարութեամբ վարուելու ([illegible])։

Մանտէյֆելը յայտնում է թէ պահպանողականների մեծամասնութիւնը բողոքում է այդ առաջարկութեան դէմ։ Նորան են յարում Միքբախը ազատ պահպանողականների և Մարկուարդսէնը ազգային-ազատամիտների կողմից։ Նիստը փոթորկալից բնաւորութիւն է ստանում։ Կենտրոնն ընդհատում է թշնամական աղաղակներով։

Կառավարութիւնը վիճաբանութիւններին չէ մասնակցել։

ԶԱՆԱԶԱՆ

[illegible]. —Մի գիտնական հին գրչագրերի մէջ բացատրութիւն է գտել թէ ինչու խաղաթղթերը 52 հատ են և ոչ մի կլոր թիւ, օրինակ 50 կամ 60։ Բանն այն է որ թղթերի թիւը համապատասխանում է տարուայ 52 շաբաթին։ Թղթերի չորս տեսակները նշանակում են տարուայ չորս եղանակները։ Ամեն տեսակի տասներեք թուղթը նշանակում է տարուան ամէն մի եղանակի տասներեք շաբաթները։ Տասնոցից յետոյ գալիս են պատկերները, որ համապատասխանում են 11, 12, 13 նոցներին, բոլորի գումարը միասին անում է 91 որ տարուայ քառորդի օրերի թիւն է։ Ուրեմն բոլոր թղթերը, այսինքն տարուայ չորս եղանակները միասին անում է 364 օր, այն է համարեա տարուայ բոլոր օրերը։ Այս է եղել թղթախաղն հնարողի ղեկավարող սկզբունքը։

—

Պապական աթոռի հարստութիւնը որ պահւում է առաւելապէս անգլիական բանկում, հասնում է 250 միլլիօնի։

Վատիկանի ընչից կառավարիչն էր Մանինգ կարդինալը, որ Անգլիական բանկի մի նախկին կառավարչի որդի էր։ Այս կարդինալը մինչև իւր մահը Լևոն XIII-ի լիազօրդականն էր դրամական հաշիւների վերաբերմամբ։

Ինչ վերաբերում է պապին, նա էլ բաւականին անձնական կարողութիւն ունի։ Մեծ հողեր ունի նա Հէյլբրստովում, Լոնդոնի մօտ և շատ անշարժ կալուածք Սիտիի աղքատ թաղերում։

—

օգոստոսի 13-ը. երբ միայնակ կանգնած էի որբացած Անիի պատերի տակ։ Այնտեղ սիրտս փուլ անող արտասուքները այստեղ ևս ուզեցին պաշարել։ Եւ պաշարեցին։ Մէկ էլ աչքս բաց արի գիւղի վերի թաղին, Ծերունի Ղարայի դռանը. մէկի տեղ տասն ու հինգ հոգի ձիու կապը բռնած դուրս եկան, իսկ Ծերունին, հայի օջաղի հաստարմատ կաղնին ինքն էր որ ձեռքից բռնելով դոնաղ օթախին առաջնորդեց։

Ես գտնւում էի իմ սիրած ու պաշտած նահապետական հայ օջախում. պապը ողջ, տատը ողջ, հինգ տղէն կարգուած միատեղ իրանց հարսներով իրանց ճնգլի ճուտերով։ Սրահում մի ոստանի տեղ երկուսը դրած, հարս ու աղջիկ տակը նստած գործում են, աջ կողքին մեծ հարսը տափագործ շալ է գործում, ձախ կողքին ճկլահորը (ճուլհակահորը) վէր թողած պառաւ նանը նստած կտաւ է գործում։ Մի կողմից հարսն է կուժէճով գորգի գործուածքին խփում, թխացնում, միւս կողմից պառաւն է ոտնատախտակը շարժելով սանդրքները չխկացնում. երրորդ տեղից էլ կամ եռատամ թելատուի կամ սրածայր մորթի դնգոցն ու վստոցն է լսւում։

—

Դեռ նոր էի իջել. ներկայացան գիւղի վեաքիլները—չորս հոգի։ Դրանք նոյեմբ. 15-ից մի համախոսական էին կազմել, 166 հոգու էլ ստորագրել տալով նահանգապետի միջոցով ներկայացրել կառավարութեանը, որ իրենց վիճակին խղճալով 50,000 ռուբլի փոխառութիւն տայ, որ կարող լինեն իրենց այրուած տների, գոմերի և կալքերի փոխարէն նորերը կառուցանել։ Այդ ստանալիք գումարը այժմեանից բաժանել են 166 հոգին իրենց մէջ։ Ով ինչքան ուզեցել է բաժին է վերցրել։ Ամենափոքր բաժինը 100 ռ. իսկ ամենաշատը 2000 ռուբլի։

Անշուշտ մտածած կը լինին, առատ փողեր է, կը վերցնենք առևտուր կ'անենք, աշխատանքներ կ'անենք նրանով, էլ յետ կը դարձնենք մի քանի տարուց յետոյ գանձարանին։ Մեր համեստ կարծիքով աւելորդ է պարտք վերցնելը այդքան մեծ գումար. վաճառականութիւնն ու սովդաքեարութիւնը Ղալագեցուն ձեռք չի տալ, նախ և առաջ հարկաւոր է տուն շինել. Թող գերաններ խնդրեն. Ինչպէս իրանք էին հաշուել. ամեն մի տան և գոմի համար 60 գերան է պէտք, 4 վերշոկ հաստուց ունենայ, 7 արշին երկնուց. Ողորմած կառավարութիւնը հրկիզեալ Ղալագէին այդպիսի չնչին նպաստը չի խնայիլ, այժմս ամենահարկաւորը դա է. դրա վրայ էլ պէտք է պըն գնն առանց ուշ դարձնելու մի քանի անձանց ջանքերին, որոնք երկրագործութեամբ չպարապելով կամենում են մի որոշեալ գումար ճանկել և պարապել առևտրով, չարչիութեամբ, վաշխառութեամբ։ Գերան խնդրող հազիւ 100 տուն լինին, ուրեմն ընդամենը 6000 գերան, 13 վերստի վրայ գտնւում է արքունական անտառը, եթէ իրաւունք տըրուի, մինչև գարուն բացուելը կամաց կամաց անտառում կ' կը կտրեն և' գերանները գիւղը կը քաշեն։ Կը մնայ քարի հոգսը, թէև ձեռնտու կը լինի ղալագեցիներին աղիւս բանացնելը։ Նրանց հողն ընտիր է թէ աղիւս, թէ կղմինտր շինելու, հարկաւոր է միայն վարպետ բերել տալ, որ թանգ և դժուար բան չէ գոնէ տեղացի հարուստների համար։

Ղալագէի գետինները անջրդի են, բայց ստացած հացը ընտիր է և լուսի պէս ճերմակ, գինին պատուական է և ախորժահամ։ Եղել են տարիներ որ երաշտը մանաւանդ մուկը վնասել են վարուցանքին։ Անցեալ տարի չէ հերու գրեթէ սովի բերանումն են եղել աշխատասէր ղալագեցիք անիրաւ մկան աւերածից։ Երկրագործի մէջքը այստեղ է կոտրուել ցորեն փոխ առնելով իւր բազմանդամ ընտանիքը կերակրելու համար։ Մուկը մի կողմից է աղքատացրել հողագործին, վաշխառու անագորոյն արարածները միւս կողմից։ Նեղ տեղը լծելով երկրագործին փողատէրերը փոքրիկ գումար են փոխ տուել հետևեալ պայմանով. օրինակ՝ մի քանի ամսուայ մէջ գիւղացին տասն ռուբլին տասնուհինգով պէտք է վերադարձնէր՝ կամ յօժարուէր իւր ստացած իւրաքանչիւր ռուբլու տեղ 4½ ման (խաղողի մանը=20 փունտին. իսկ գինու մանը=10 փունտին) ընտիր, սև խաղող տալու, այսինքն մի փութը 40 կոպէկով։ Գիւղացոց խօսեցնելիս երբ հարուստների անունն էի տալիս, նրանք աղէխորով խոստովանում էին.

—Վըժապետ, քե մատաղ ինիմ, մըր կեղը կրակը հօվ էր տուալ. էդ ղզզուներան (ցին) ուրբաբու էկաւ։

Աստուած գթալով Ղալագեցոց աշխատանքին անցեալ տարի այնպիսի առատ բերք ու պտուղ է տուել, որ Ծերունիքը դրա նման տարի չէին յիշում։ Այդպիսի տարուն գիւղացին անուանում է պարտքատէրի աչքը հանող տարի։ Ինչքան որ պարտ են լինում վաշխառուներին լիուլի տալիս են, գինուց՝ գինի, ցորենից՝ ցորեն և եախաները մի մասով թափում. մնացածն էլ պահում են որ իրանց ընտանիքը կառավարեն։

Եղած ցորենը ղալագեցիք հորում են. այսինքն իրանց տան դռանը գետնի մէջ լայնափոր հոր են փորում, կողքերը կեմով, ծղոտով կըրպում և ցորենը տափելով մէջը գլուխը լաւ ամրացնում տախտակով կամ այլ բանով. կէս արշին հողով էլ ծածկում։ Այնուհետև վտանգ չկայ։ Սովորութիւն ունին գիւղերում, նոյնը և Ղալագէում, որ մի քանի ամսուայ հացի պաշար են պատրաստում. 40—50 փ. ալիւր են ունենում քընդուկների (քնդուկ-երևի գնդուկ կաւից շինած ամբար, խորանարդի ձևով) շինողները Ղալագէի կանայք ու հարսներն են։ Արևի տակ չորացնելով, ներսից ու դրսից գիլասարով (Ղալագէի մէջ գտնուող ամենաընտիր ալիբաստրի հանք) ճերմակացնում են ու գործ ածում ցորենի, ալիւրի համար։ Այդ կաւէ քնդուկների տեղ այլ տեղեր գիւղացիք ճիպոտներից հիւսած քթոցներ են բանեցնում։

Գինու բերքը աւելի շատ է եղել, հաւատացնում էին, որ այս տարի 30,000 փ. խաղող ծախել են, մի 30,000 փ. էլ գինի շինել։ Գինին տեղաւորում են կարասներում գիւղից դուրս կալերի մօտ, այգիներին կից։ Կարասները գինով լիք թաղուած են բաց երկնքի տակ միայն կէս արշին հողով ծածկած. ոչ փակ կայ վրան, ոչ բանալի։ Դրանցից կարելի է հետևացնել ղալագեցու իրար սիրելը. իրար ապրանքի աչքի պահելը։ Չգիտեմ ով էր ղալագեցոց գող դուրս բերել մի լրագրում։ Կէնդ ու մէնդ լրբեր, գողեր ամեն տեղ կըլինին թէ գիւղում թէ քաղաքում։ Գիւղը գող չէ ծնում, գիւղի գողութիւնը քաղաքներից օրինակովի է, սովորովի է։

Կալ ու կասը վերջացնելուց յետոյ ղալագեցիք դեռ յուլիս ամսին արքունական անտառից փայտ ու ցախ են կրել դըռներին կիտել։ Ձմեռուայ 5 սայլ փայտ ու ցախ պէտք է ունենայ ձմեռուայ պաշար։ Դրա կողքին մի դէզ խոտ էլ դընում է, որ ամեն անգամ ձմեռուայ ցեխով, ձիւնով կալը խոտի վազ չտայ, մանաւանդ որ ամբողջ աշունքը վար ու ցանի ետևից պէտք է լինի, դաշտից իրիկունը դառնալիս ինքն էլ ջարջարդուած կը լինի, լծկանն էլ, ոչ ինքը ախորժ կունենայ կալից շալակով խոտ բերելու և ոչ լծկանին խոտ ուտելիս աչք պահելու, չէ որ իրեն էլ քիչ հանգստանալ է հարկաւոր։ Դրա համար Ղալագեցին իր տան մօտ պահում է գոմը, ուր կապում է իւր լծկանը և մի երկու կթան, եթէ ունի։ (Հարուստները իրանց տաւարը, կթանը գիւղից ներքև ձորաբերանումն են պահում։ Այնտեղ ձմերոցն է, ղշլաղ են անուանում ունին առանձին գոմ, խոտի դէզեր։) Գոմի կողքին դարմանն ու խոտը, իսկ տան դռանը փայտն ու ցախը, թոնրատան պատն ու դուրս ցիցքաղ տուած։

Ուրեմն հոկտեմբերի 8-ի առաւօտը Ղալագէ գիւղին նայողը կըտեսնէր տներ, գոմեր, բակեր, որոնք ամեն կողմից շրջապատած են խոտի դէզերով, փայտ ու ցախով Ուրիշ անգամներ, ինչպէս պատմեցին ինձ, կրակ պատահել է, դիտմամբ մէկի խոտ կրակել են, բայց իսկոյն վրայ են թափուել, հանգցրել, գիւղին ոչ մի վնաս չի պատահել։ Բայց այս անգամունը դիտմամբ չէ. կը պատմեմ թէ ինչից է առաջացել և ինչ սոսկալի արհաւիրք ածել ողջ Ղալագէի գլխին։ Այո, սոսկալի. . .

Քանալեանց Ա.

1893 թ. 23 Նոյեմբ.
Ղալագէ։

Անգրագէտների թիւը.— Եւրոպայում հետևալն է, 100 վրայ հաշուելով. Սաքսոնիա—100-ից 0,2. Նորվեգիա—0,3, Բաւարիա և Շուէդ—0,4. Պրուսիա—0,6. Ֆինլանդիա—1,9. Անգլիա—9. Ֆրանսիա—9,5. Աւստրիա—23,6. Իտալիա—42. Ռուսաստան 78,3.

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ա մ ե ն օ ր, բացի կիւրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների:
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10½ ժ. աչքի և նեարդային հ.
Դ. Գ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10½—11½ ժ. ներքին, երեխայոց և կանանց հ.
Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՒԻՉ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, և քթի հ.
Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Վ. ՉԵՊՈՒՐԿՈՎՍԿԻ — 5—6 ժ. երեխայոց և կրծքի ց., քիմիա-խոշորացուցական հետազօտութիւն խխի և մէզի:
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Վճար 50 կ.: համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցումը ընդունվում են՝ և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան:

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

(Մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը)

Թ ի ֆ լ ի զ ի ց՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վ լ ա դ ի կ ա վ կ ա զ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 6 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 10-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը 9 ժամին երեկոյեան:

Վ լ ա դ ի կ ա վ կ ա զ ի ց՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թ ի ֆ լ ի զ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնումէ Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 9-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը 8½ ժամին երեկոյեան:

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պօլսի միջեւ:

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 2 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 11½-ին, խուճապ ընթացքով Եալթայի և Սևաստոպոլի վրայով:

Երեքշաբթի օրերը (լոյս չորեքշաբթի գիշերուայ ժամը 2-ին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Հինգշաբթի օրերը ցերեկուայ ժամը 12-ին ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով:

Կ. Պօլիս երկու շաբաթը մէկ անգամ երեկոյեան ժամը 7-ին:

Բաթում է դառնում.

Ուրբաթ օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով:

Ուրբաթ օրերը առաւօտեան, խուճապ ընթացքով Սևաստապօլի վրայով:

Երկուշաբթի օրերը երեկոյեան շրջանառու ըմթացքով բոլոր նաւահանգիստների վրայով:

Չորեքշաբթի օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.:

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.:

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 25 ր. 1 Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 2-ին 25 ր.:

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.:

Ամառուան գնացքը Թիֆլիզից Միխայլովօ դուրս է գնում ճաշից յետոյ 3 ժամին. Միխայլովոյից Թիֆլիզ՝ առաւօտեան 8 ժ, 10 ր. ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 9 ժամին 20 ր., իսկ Գանձակից Թիֆլիզ է հասնում առաւօտեան 1 ժ. 30 րոպէին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ ո յ ս տ ե ս ա ւ
Բ. ԱՅՎԱԶԵԱՆԻ
ԱՇՈՏ ԵՐԿԱԹ
Պատմական վէպի առաջին հատորը և բաժանուեցաւ պ. պ. բաժանորդներին:
ԳԻՆՆ Է 75 ԿՈՊԷԿ
շքեղ կազմով 1 ռ. 20 կոպ.
Երկու հատորի համար 1 ռ. իսկ լոյս տեսնելուց յետոյ 1 ռ.—50 կ.:
Պէտք է դիմել Թիֆլիզ, Կենտրոնական գրավաճառանոցին կամ հեղինակին. Тифлисъ, Редакція «Ардзаганкъ. Баграту Айвазянцу.
(Խ.) (5—4)

Ա ն խ տ ի ր բոլոր հասակների համար յարմար պ ա տ կ ե ր ա զ ա ր դ
ՔՐԻՍՏՕՖ ԴԻԿՅԱԶՆ
գրքոյկս վաճառվում է բ ա ց ա ռ ա պ է ս Խ ի դ ե կ է լ ի գրավաճառանոցում.
Գինն է 30 կոպ.
Լ. Մելիք-Ադամեանց:

Parfumerie Ganterie
MODES
H. BERLEMONT
COIFFEUR
de S. A. I. le Grand Duc
MICHEL NICOLAÉVITCH
Bonneterie pour hommes. Chapeaux pour dames. Fleurs, plumes. Maroquinerie, ciseaux rasoirs. Cravates, mouchoirs. Brosserie. Parfumerie française et anglaise des premières maisons.
Salon de coiffures pour dames.
Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ամենայն ճշգրութեամբ.
Берлемонъ, Дворцовая улица.
(91) (100—99)

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
ՍԱՐԱՏՈՎԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐ
ԲԷՆԳԷՐ եւ ՍՏԵՓԱՆՈՎԻ
Առևտրական տուն

ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
տաք շալեր բումազէյ և բումազէյից կարած տղամարդկանց շապիկներ, խանութում գտնւում է նոյնպէս բաւականաչափ սարպինկայի գուլպաներ, գլխի փաթեթներ, թաշկինակներ և տղամարդու գունաւոր շապիկներ բազմատեսակ և բազմերանգ սարպինկաներից կարած:
Թիֆլիզ, Սօլօլակսկի փողոց: (30—12)

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ

	Ռ.	Կ.
1) Շմիդտ, «Ֆրանկլին», 2 տպ. նախատիպ.	—	40
2) » «Վաշինգտոն», 2 տպ.	—	60
3) » «Հոմերի Իլիականը», պատկերներով	1	—
4) » «Հոմերի Ոդիսականը»	1	20
5) Սմայլս, «Բնաւորութիւն»	1	50
6) Ամիչիս, «Սիրտ»	1	—
7) » «Ապէնինններից մինչև Անդէսը».	—	10
8) «Ռուստէմ և Զօհրաբ»	—	20
9) Շիլլէր, «Աւազակներ», ողբերգութիւն	—	50
10) Սմայլս, «Ինքնօգնութիւն»	1	50
11) Տոլստոյ, «Ռոբինզօն», փոքրերի համար.	—	20
12) » «Կօլումբը», փոքրերի համար	—	15
13) Հաուֆ, «Բէաթրիչէ», վէպիկ	—	30
14) » «Նօնցայի բերդը», վէպիկ.	—	30
15) Շմիդտ, «Ռէյնեկէ աղուէսը»	—	60
16) Վալտներ, «Հաւատարիմ Սավիտրին» *).	—	10

Ճանապարհածախսը թարգմանչի վրայ է: Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Ананoвское училище, և կենդրոնական գրավաճառանոցում:

*) Հրատարակութիւն «Թ. Հ. Գր. Հրատարակչ. Ընկերութեան:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՏԱՆԸ
ԹԻՖԼԻԶՈՒՄ եւ ԲԱԳՒՈՒՄ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
1) գեղատնային ներկեր և զանազան նիւթեր.
2) գեղատան գործատնային նիւթեր.
3) անդամահատական գործիքներ, սեսինի իրեր, վէրքերի փաթեթներ.
4) հանքային բնական ջրեր և աղեր.
4) ախտահանիչ միջոցներ.
6) կօսմետիքական ապրանք զանազան գործարանների.
7) տնտեսական առարկաներ.
8) լուսանկարչական նիւթեր.
9) խաղողի որթը բժշկելու գործիքներ և դեղեր.
10) էֆիրի իւղ, պտուղների էսսէնցիա լիկեօրի և օղիի համար:
(118)

ԹԱՏՐՈՆ
ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
Առաջիկայ 1893/94 Թ. ձմեռուան ընթացքում լոյս կը տեսնէ երկու գիրք բաղկացած 10—14 տպագրական թերից, մեծադիր երեսներով, տպագրուած երկու սիւնակի վրայ:
1-ն գիրքը կըհրատարակուի 1893 Թ. նոյեմբերին, իսկ II-ը 1894 Թ մարտին: Երկու գրքի գինն է 3 ր., 30 կ. (հաշուելով և ճանապարհածախսն օտարաքաղաքացիների համար), իսկ իւրաքանչիւր հատորն առանձին 2 րուբլի 25 կոպէկ:
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
1. Հայկական բեմի ռեպերտուարը (ցուցակ պիեսների):
2. Թատերգութիւններ ինքնուրոյն և թարգմանական, որոնք ներկայացնելու թոյլատրուած են:
3. Մենախօսութիւններ, տեսարաններ և ոտանաւորներ: Օպերաների լիբրետտօ:
5. Ռեժիսսեօրական բաժին, պիեսների ներկայացման եղանակը, հեղինակների ցուցումները դերօրացիաների և զգեստների վերաբերմամբ, յօդուածներ գրիմի մասին և գործնական նկատողութիւններ բեմական կառավարիչների համար:
6. Քննադատական յօդուածներ թատրոնական գեղարուեստի և երաժշտութեան մասին:
7. Յօդուածներ թատրոնի և գեղարուեստի այլ ճիւղերի պատմութիւնից, բեմական գործիչների կենսագրութիւնները և նրանց կենդանագրերը:
8. Տեղեկութիւններ գեղարուեստական երկերի մասին Ռուսիայում և արտասահմանում:
9. Մատենախօսութիւն:
Հրատարակիչ՝ Ալեքսանդր Թարխանեան:
Դիմել հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Александру Тарханянъ.
Ծանօթ. Առաջին գիրքը մեզանից անկախ պատճառներով մի փոքր կուշանայ և լոյս կը տեսնէ դեկտեմբերի սկզբին:
Առաջին գրքում տպագրուած կը լինին հետևեալ պիեսները Մոլիեռ «Սկապէնի արարքները», թարգմ. Յ. Լալայեանի, Փ. Օնէ «Դարբնոցապետ», թարգմ. Ս. Արծրունու, և Փառնակէսի նոր փոգևիլը «Խանասորեղծ» անունով.

ԴԱՐԲՆԱ-ՄԵՔԵՆԱՅԱԳՈՐԾԱՐԱՆ
ՊՂՆՁԷ ԵՒ ՉՈՒԳՈՒՆԷ ՁՈՒԼԱՐԱՆ
Ն. Ա. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑԻ
Թիֆլիզ, 1 և 2 Թումանեան փողոց, անկիւն, սեպհ. տուն:



Գործարանը ընդունում է ամենայն տեսակ դարբնա-մեքենայական ձեռագործներ պատրաստելու պատուէրներ, ջրանքների և շոգանցքների պիտոյքներ, «ինժեկտորներ», ջրահան մեքենաներ, կրանտներ, սուլիչներ, եղամաններ և այլն: Անայրելի երկաթէ պահարաններ, նոր տեսակի պատենտովանի բանալիներով: Երկաթէ դռներ, վանդակապատներ, ցանկապատներ: Փայտէ դռների պիտոյքներ, կողպէքներ, բուչկաներ, բրոնզէ բուչկաներ և այլն, պրէսներ, բրդի և բամբակի, խոտի և երկաթի համար:
Գործարանիս կից՝ մթերանոցում կարելի է միշտ գտնել պատրաստի մեծ քանակութեամբ փայտէ դռների և պատուհանների պիտոյքներ, զանազան տեսակի ամենադիմացկուն և ամենաաժան գնով, մեծ քանակութեամբ գնողներին առանձին պայմաններ. պատուէրները կատարվում են ճշգրութեամբ և կարճ միջոցում:
Օտաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ, Слесарное заведеніе Н. А. Калантарьянца.
(128) (6—4)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
1894 ԹՈՒԻ
ՀԱՅԵՐԷՆ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ (ՊԱՏԻ) ՕՐԱՑՈՅՑԸ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՄԲ
ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Այս տարի ա ռ ա ջ ի ն ա ն գ ա մ լուսնի բոլոր երևոյթները, խաւարումները և տարուայ եղանակները գրել ենք ֆիզիքական օբսէրվատօրիայի ամենաճիշտ եզրակացութեանց համեմատ: Օրացոյցը տպվում է գործարանից յատկապէս պատուիրած ընտիր թղթի վերայ:
Գինը հատով . . . 60 կ.
Ճան. ծախքով . . . 75 կ.
10-ից աւելի առնողին 10%
25 » » 15%
100 » » 20%
200 » » 25%
Ճանապարհի ծախքը գնողի վերայ է:
Բ ա գ ո ւ վաճառւում է եղբ. Տէր-Յովհաննիսեանների վիմագրատպարանը:
(10—9) Գիւտ քահանայ Աղանեանց

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ և վաճառվում է Թիֆլիզի
ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄԸ
ԵՒՏՈՒՇԵՎՍԿՈՒ
ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
Թուաբանական խնդիրների և թուական օրինակների ժողովածուի լիակատար և հարազատ թարգմանութիւնը, նախակրթական սիստեմատիքական դասընթացքի համար մ. ա. ամբողջ թուեր. գիրքը բաղկացած է 327 սովորական ութածալ էջերից և արժէ 50 կ. հայոց ուսումնարաններին և օտարաքաղաքացի գրավաճառներին 20% զեղչ է լինում, ճան. ծախքը գնողների վրայ է: (10—7)

Թիֆլիզի Կենդրոնական և Կովկասի
ՈՒՐԻՇ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ Է
ԱՏՐՊԵՏԵԱՆԻ
«Ալմաստ» վէպը Բարձր-Հայոց կեանքից . . . . 2 ռուբ.
«Խէչ-Կարապետ» վէպը Հայ-կաթոլիկների կեանքից . . . . 1 »
«Ղուշան» ողբերգութիւն Թուրքահայերի կեանքից . . . . 1 »
«Սարրաֆ» ողբերգութիւն Թիւրքահայերի պատմ. կեանքից . . — 30 կ.
(62) (50—40)

„ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ"
(ВѢНСКІЙ МАГАЗИНЪ)
ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ
Գոլովինսկի պրոսպեկտ, առաջին գիմնազիայի հանդէպ, տուն Մդիվանիի:
Ստացուել է տղամարդկանց և երեխայոց համար, ամենավերջին ձևի, Աշնանային և Ձմեռային ընտիր հագուստների
!!!! ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ !!!!
Ծախվում են ամենամատչելի և էժան գներով:
Առանց սակարկութեան:
(25—18) Խուդավերդեան: